

խանձից և անզօր չարութեան ճնշումից:

Մենք, ի հարկէ, պ. Լէօի դէմ բարկանալու ախորժակ չունինք: Եւ ո՞ր խելքը գլխին մարդը կարող է բարկանալ նրա դէմ: Գրականական Սարակեփիչներ ամեն տեղ կան, թող լինի մէկն էլ մեր մէջ: Ամբողջ ուս գրականութիւնը անզօր է Բուրենիներէ դէմ: Ո՞ր փիղը կարող է կապել քոթոթների բելաւնը: Լեռնարար ուշադրութիւն դարձնել պ. Լէօի չարամիտ արշաւանքի վրայ, մենք անկարող ենք: Մենք, ընդհակառակը, փափագում ենք, որ պարոնը շարունակի աղաւաղել մեր լաւագոյն հեղինակների լաւագոյն գրուածներն այնպէս, ինչպէս աղաւաղում է պոփո, Մենք բարի ենք, գիտենք, որ այդ արշաւանքը զոնէ ժամանակաւոր հանգստութիւն է տալիս նրա այրուող ու տապալկուող սրտին և սպասում ենք, որ նա վայելի այդ հանգստութիւնը: Սակայն հաւատացնում ենք պ. Լէօին, ոչ որ ուսահայ վիպասաններից մեղաւոր չէ, որ նա ինքը իբրև վիպագրող գորուել է անդունդը: Մենք հաւատացած ենք, ընդհակառակը, որ եթէ հնար լինէր, իւրաքանչիւրը պատրաստ էր նրան խորխորատից հանելու և մտցնելու գեղեցիկ գրականութեան տաճարը, որի դէմ այնքան անզօր չարութիւն է տածում իւր սրտում:

ՍՈՅԼ

ՀԱՅՀՈՅՆԼՈՒ ՄԵՆԱԶՆՈՐՉ

Ամեն բան իւր չափն ու սահմանն ունի բացի «Մշակ» լրագրի անզօր չարութիւնից: Գրականական տափալկութիւնների օրգանը տարին տասներկու ամիս գործ է ածում մեր դէմ այն միակ զէնքը, որ յատուկ է իրան—ստուութիւն և զրպարտութիւն, որպէս զի մի կերպ կարողանայ մեզ արատաւորել: Զը գիտենք ի՞նչ ենք արել այդ թերթին, որ կտրել ենք նրա քունը, զրկել հանգստութիւնից: Մեղաւոր ենք միթէ մենք, որ հայ հասարակութեան մտածող մասը այսօր զգուանքով է արտասանում մի թերթի անունը, որը ոչ մի ջանք չի խնայում ինքն իրան բարոյական անդունդը գլորելու և վերջապէս... գլորեց:

Իւր այս տարուայ 11-դ համարում զգուանքի աւարկայ դարձած թերթը դարձեալ մի կոյտ ցելի է չարտում շատերի հետ և՛ մեզ վրայ: Իս «Մամուլ» վերնագրով մի յօդուած է:

Գրականութեան տաճարից աքսորուած Լէօի հարազատ երկու-
րեակը այդ յօդուածի մէջ մեր դէմ գործ է ածում մի լեզու,
որի նմանը գուցէ Շուշուայ թոփխանէում անգամ չի գոր-
ծածուում:

Այդ յօդուածում 4 տեղ յիշուած է „Լուսմայի“ խմբագրի
անունը և այնտեղ մի շատ բնորոշ կէտ կայ. „Մշակը“ սպառ-
նում է մամուլի մի մասին, ասում է, որ մամուլի մի մասը
այսքան տուժում և դճռ խելքի չէ գալիս: Առական զի՛նչ
ցուցանէ:

Պատասխանել յիշոցների այդ երկար շարուածքին—մենք
անգոր ենք:

Միակ լուրջ դարձուածը այդ յօդուածում այն է, թէ
„Լուսման“ անցեալ 1908 թուականին ընթերցանութեան նիւթ
չէ տուեր:

Թէ ինչ է տուել և ինչ է տալիս „Լուսման“ իւր ընթեր-
ցողներին, այդ մասին դատելը մեզ չի պատկանում: Թողնենք
խօսի Բագուի մի անաչառ ուսու լրագիր, որի մի յօդուածը
քաղուածօրէն տպում ենք „Լուսմայի“ ներկայ համարում: Բայց
հարցնում ենք, ի՞նչ ընթերցանութեան նիւթ է տուել մի ամ
բողջ տարի ինքը „Մշակը“, ի՞նչ է տուել նրա հաւատարիմ
բարեկամ Մուրճը: Ահա հարց, որին եթէ կարող են թող
պատասխանեն Լէօները: Մենք ինքներս չը գիտենք ի՞նչ է
տպուել և տպում „Մուրճում“, քանի որ ահա երրորդ տարին
է այդ ամսագիրը կարդալու հաճոյքից մենք զրկել ենք մեզ:
Բայց ահա ինչ է ասում իւր վերջին համարներից մէկում „Տա-
րագը“, որի ճաշակին այս դէպքում բոլորովին հաւատում ենք:

„Այն օրուանից ի վեր (այսինքն այն ժամանակից, երբ
„Լուսմայի“ աշխատակից Երրվանդադէի „Արտիստը“ տպուեց
„Մուրճում“—երեք տարի առաջ), մինչև այժմ ոչ թէ „Ար-
տիստի“ նման, այլ նրա կէսին իսկ արժող որ և է գեղարուես-
տական ինքնուրոյն գրուածք—վէպ կամ պատկեր՝ լոյս չի տե-
սել „Մուրճում“:

Այսպէս, ուրեմն, ամբողջ երեք տարուայ ընթացքում
„Մշակի“ բարեկամ „Մուրճը“ տուել է միմիայն մի հատիկ գե-
ղարուեստական երկ, այն էլ մեր աշխատակիցինը:

Գուցէ „Մշակը“ ինքը մեծ մեծ բաներ է տուել իւր „ճա-
րհատեալ“ բաժանորդներին: Օ, այստեղ մենք կաշկանդուում
ենք և հրացած ու ապշած ձգում ենք գրիչը, յիշելով Վրճինի:

աննման «Մանրանկարները» և Լէօի հանճարեղ «Զրոյցները»։ Գրականական այդ անմահ գոհարների առջև ինքը Շէքսպիրը կարող է նահանջել։ Միայն ափսոս, հազար ափսոս, որ «Մշակի» բաժանորդների խելացի մասը և մի քանի բարեկամներ նամակներով և բացարձակ խնդրել են ու պահանջել, որ «Մշակը» զրկի մեզ այդ գոհարներից և ստիպել են Վրձիին ընդհատել իւր «Մանրանկարները, իսկ հանճարեղ Լէօին իւր «Զրոյցները»։

Սակայն մխիթարուենք նրանով, որ այսուհետև Փալան-թարը կը հիացնի մեզ իւր շրջիկ կաթնարաններով, իսկ Լէօն, այս անգուգական գեղարուեստագէտը, իւր «քննադատութիւններով»։

Խեղճ հայ մամուլ, խեղճ գաւառացիներ, որ ուրիշ օրաթերթ չունենալով, ստիպուած էք ձեր տասնեակ ուսւրիները գէնը չպրտել։ Բայց ինչ արած, ամայի անապատով անցնող քարվանք ճարահատեալ հոտած ճահճից էլ է ջուր վերցնում...